

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Թիֆլիսի առևտրական գազեր:

Հրատարակվում է շաբաթը մէկ անգամ կէս թերթ, կիրակի օրերով: 10 ամսվայ դինը Մարտիցը մինչև Յունվարը քաղաքում 2 ման. 50 կոպ., դուրսը՝ 3 մանէթ:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ

(Ա.Ռ.Ա.ՋԻՆ ՏԱՐԻ)

Գազեթին ստորագրվի կարելի է լամբաղորդի մօտ:

Գազեթումը հրատարակելու կընդունվին մասնաւոր յայտարարութիւններ: Գների մասին կարելի է իմանալ լամբաղորատանը:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

«Վաճառականը» 1867 թ.ին: Տէրութեան կարգադրութիւնները: Մատայտիների փոփոխութիւնները: Տօրգեր և ուրիշ յայտարարութիւններ «Վաճառական» 1867 թ. թղթակիցների մասին: Պ. Գ. Սունդուկեանցի: «Վաճառական» պատճառով համարամուծ ստիւրած հայ երիտասարդների վրայ երկու խօսք: Զանազան տեղեկութիւններ: Առևտրական տեղեկութիւններ: Մասնաւոր յայտարարութիւններ:

«Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն»

1867 թ.ին.

Ինչպէս հրատարակել էինք «Վաճառականի», 30-դ № ումը 1867 թ.ին «Վաճառականը», կտպվի էնպիսի թերթերի վրայ, որ ամիսը հիմնական 4 կէս թերթի տեղ 3-ւց մինչև 6-ը լինի իր սեփականութեամբ: Գալ տարվան ստորագրվողները կատանան ձրիաբար «Առևտրական բառարան», որի մէջ ամիսախլած կլինին թէ առևտուրին վերաբերեալ գլխաւոր գործածված բառերը և թէ գլխաւոր փողերի որքանութիւնը Ռոսի փողի հետ համեմատելով: 1867 թ.ին «Վաճառականի», մէջ կտպվին շարունակ ամեն նու մերումը «Ռուսաց տեղեկագրի ընկերութեանց», ստացած թէ առևտուրին և թէ միւս հասարակ-

կական գործերին վերաբերեալ նոր համբաւները: «Վաճառականի», գինը գալ տարի թէ քաղաքում և թէ դուրսը կլինի 3 մ. Գալ տարի «Վաճառականը», կգուրս գայ հինգշաբթի օրերով:

Հիմնկվանից ընդունվում է գալ տարվան ստորագրութիւնը քաղաքում «Վաճառականի», խրմբագրողի և նրա գլխաւոր գործակից պ. Ա. Երիցեանցի մօտ, նմանապէս և գրավաճառ պ. Ա. Էնֆիաճեանցի գրատանը, իսկ օտար քաղաքացիները պէտք է գառնան ուղղակի «Վաճառականի», խմբագրողին էս հասցէով «Վաճառականի», խմբագրող Գէորգ Տէր-Աղէքսանդրեանցին թիֆլիսումը», իսկ Ռուսերէն՝ «Редактору Тифлисского Торгового листа Егору Тер-Александрову въ Тифлисе».

Ինդրում ենք 1867 թ.ին մեր գազեթին ստորագրվել ցանկացողներից, որ նրանք յայտենն իրանց ցանկութիւնը մեզ որքան կարելի է կարճ միջոցումը, որ կարողանանք ստորագրվողների թիւ համեմատ կարգադրութիւն անել գալ տարվան համար:

ՏԵՐՈՒԹԵՆԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

ՄԱՌԱՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈՒՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Լինելի №-ի 27-դ բատալիօնի շտաբակապիտան ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆՅԸ ստացաւ մանօրի տասիճան, հոկտեմբերի 5-ին:

ՏՈՐԳԵՐ ԵՒ ՈՒՐԻՇ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Քուլթախի գաւառական կառավարութեանումը 1867 թ. յունվարի 7-ին նշանակված է էնտեղի պրովիանտի մագաղինի շուրջ քարէ պարիսպ շինելու տորգը: Էս գործի համար նշանակված է 2478 մ. 81³/₄ կ.

Նիխամիտտարի ղինտորական հիւանդանոցի կանտորայումը 1867 թ. յունվարի 15-ին նշանակված է էդ հիւանդանոցի համար հարկաւոր դանազան փէտեղէնների հասցնելու տորգը:

Թիֆլիսի գաւառական կառավարութեանումը 1867 թ. յունվարի 25-ին նշանակված է Թէլաւի ընակիչ Սիմօն Նւանդուկեանցի թէլաւումը գտնված 1200 մ. ղին գրած երկու յարկանոց տան, այգու և հողի ծախելու տորգը:

Մի և նոյն տեղումը 1867 թ. յունվարի 26-ին նշանակված է գուրերնակի սեկրետար Նիկողայոս Դաւթեան թամաշկանցի թիֆլիսի 3-դ մասի 3-դ կլարտաւումը գտնված և 6000 մ. ղին գրած տան և այլու ծախելու տորգը:

Կովկասեան Պրիկազումը էս դեկտեմբերի 14-ին և նրա հետեալ օրերը կծախվին իրա ժամանակին չթափված դանազան սեկեղէններ, արծաթեղէններ և ուրիշ թանկագին բաներ:

Թիֆլիսի տոկտրական գաւառանը Ռուսաց օրէնքների XI հատորի 2436 յօդումի

հիման վրայ հրաւիրում է թիֆլիսի հրապարակական նստարիւս դառնալ ցանկացողներին, որոնք որ էս ամսի մինչև 15-ը պարտաւոր են յայտնվիլ յիշեալ դատարանը օրինաւոր վկայականներով:

«Վ.Ա.Ճ.Ա.Ռ.Ա.Կ.Ա.Ն.Ի» 1867 թիի Թ.Ղ.Թ.Ա.Կ.ԻՅ-ՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

Մենք «Վաճառականի», 30-դ նուստերումը յայտնեցինք մեր ստորագրվողներին, որ 1867 թիին ունենայու ենք Ռուսաստանի և Կովկասի մէկ քանի քաղաքներումը թղթակիցներ, որոնք հազորդելու են մեզ տեղական նորութիւններ թէ առուտուրին ու թէ հասարակական գործերին վերաբերեալ:

Իս խոստմունքի գլուխ բերելու համար հիմի մենք դարձնում ենք մեր խօսքը մեր ստորագրվողներից էն անձներին, որոնք համաձայն են մեր պայմաններին, նրանցը առուտուրին և հասարակական գործերին վերաբերեալ տեղական նորութիւններ բառերը բացատրելով:

Առուտուրին վերաբերեալ նորութիւնները պէտք է լինին որ և իցէ քաղաքի և նրա շրջակայքի բնական բերքերի որքանութիւնը, մանաւանդ էն բնական բերքերինը, որոնց շատ ու քիչ լինիլը մեծ ազդեցութիւն է ունենում առուտուրի վրայ: Կղախի բնական բերքերի կարգումն են՝ ցորենը, դարին, խաղողը, բամբակը, տորոնը, մետաքսը և այլն: Նմանապէս բերքերի կարգումն են գառվելու և ոչխարների, տաւարի, ձիաներու և շերամի շատ պտուղ տալը և անցաւ լինիլը: Եղ տեղեկութիւններին հարկաւոր է աւելացնել նմանապէս, թէ նշանակված ժամանակը ի՞նչպէս է առաջանում առուտուրը, ի՞նչ գներով են ծախվում զանազան ապրանքները հացը, գարին, բրինձը, բամբակը, բուրգը, տորոնը, ապրեշումը, կոկոնը, կուպը, նաւթը, ձէթը և այլն: Թէ ի՞նչպէս է դուրս գնում փողը՝ ի՞նչ գին ունի ոսկին ու արծաթը:

Իս տեղեկութիւնների հազորդողը պէտք է աշխատէ որքան կարելի է ճշր-

դութիւն պահպանէ, եթէ ոչ մէկ սխալով նա կարող է մեծ վնաս տալ էն մարդկանց, որոնք նրանց զրած տեղեկութիւններին մտիկ տալով բան կը բռնեն:

Հասարակական գործեր ասելով մենք հասկանում ենք էն ամեն բանը, որ վերաբերվում է հայերի մաւաւոր և բարոյական զարգանալուն: Եղտեղ գլխաւոր տեղն ունին բռնած մեր ուսումնարանները և զանազան մանր-մունք զպրոցները թէ տղերանց և թէ աղջկանց համար, մեր հոգեւորականների վիճակը, որոնք հայերի հիմնկվան դըրութենով մեծ նշանակութիւն ունին մանաւանդ հասարակ ժողովրդի համար: Հասարակական գործերի կարգումն են նմանապէս և էն բարեգործական ընկերութիւնները, որոնք միջոց են տալիս խեղճերին և չքաւորներին ապրելու և մաւաւորապէս զարգանալու:

Իս երկու տեսակ տեղեկութիւնները մէկն ու մէկի մեզ հազորդողը կկոչվի մեր թղթակից:

Մեզ թղթակից լինելու համար հարկաւոր է, որ ցանկացողը ուղարկէ մեզ իր նամակը որ և իցէ վերոյիշեալ տեղեկութիւններով և եթէ էն նամակը ամբողջ կամ մէկ մասով տարի մեր գաղթումը, նրանից յետոյ էդ մարդը կկոչվի մեր թղթակից, նամակ գրելու օրից մէկ տարի ժամանակով: Ասացինք որ թղթակիցների նամակները կտպվին ամբողջ կամ մէկ մասով միայն, նոյնով թէ ի՞նչ ասալձանի կարող են հետաքրքրական լինիլ էդ տեղեկութիւնները, յարմարացնելով մեր գաղթի մեծութենին:

Հասարակական գործերի թղթակիցը իր առաջին նամակի մեր գաղթումը տպվելուց յետոյ պարտաւոր է մեզ հասցնել տարին զոնեա 3 նամակ, իսկ առւտրական գործերի թղթակիցը գոնեա 12 նամակ:

Իչ աշխատանքի համար թղթակիցը կտանայ մեզանից մեր գաղթից, հենց նրա առաջին նամակի տպվելուց յետոյ

միայն էն պայմանով, որ թէ հասարակական և թէ առւտրական գործերի թղթակիցներին չի շարունակվիլ գաղթի ուղարկվիլը, եթէ առաջինը իր տպված նամակից յետոյ 5 ամսի միջոցումը նոր նամակ չգրէ մեզ, իսկ երկրորդը նմանապէս իր առաջին նամակի տպվելուց յետոյ 2 ամիս մեզ նոր նամակ չհասցնէ:

Դեռ ևս ուրիշ կերպով էգլխի գործակիցների աշխատանքը վարձատրելու միջոց չունենալով, «Վաճառականի», խմբագրութիւնը յայտնում է գործակից դառնալ ցանկացողներին, որ եթէ մեր միջոցները ներեն, նրանցից մեզ համար աւելի աշխատողները կտանան մեզանից և առանձին վարձատրութիւն փողով:

Յոյս ունինք, որ ամեն քաղաքներումն էլ բաւական էլած զրազեա հայ տղերքը յանձն առնեն մէկ էնպիսի պարտաւորութիւն, որն որ միջոց կայ մեր գաղթին աւելի հետաքրքրական և օգտակար լինելու ստորագրվողների համար և իրանց համար էլ մէկ բեռը չի լինի ամսէնը կամ երկու ամսէնը մէկ նամակի գրելը:

Մեր գաղթի համար թղթակից դառնալ ցանկացողներից խոնարհաբար խնդրում ենք, որ առանց ուշացնելու 1867 թիի յունվարից սկսեն գործը, ուղղելով նամակները ուղղակի «Վաճառականի» խմբագրողին:

Պ. Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՅԻ «ԹԱԹԱՐԱՆՅԻ» ՊԱՏՃԱՌՈՎ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐԱԾ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԳՆԵՐԻ ՎՐԱՅ ԵՐԿՈՒ ԽՕՍԻ:

Իս տարի մէկ քանի անգամ խաղացվեցաւ թիֆլիսումը Պ. Գ. Սունդուկեանցի «Խաթաբալա», անունով պիեսը և բաւական մեծ յաջողութիւն գտաւ ժողովրդի մէջ: Եղ պիեսի գլխաւոր միտքն է մէկ հարուստ պարսի իր տղեղ աղջկայ մարդու տալու համար գործածված խաբեբայութիւնները: Հարուստի խաբեբայութիւնը կատարվում է

ները շատ հեռու են կեանքից ու կեանքի պահանջները ուրեմն էդ պիտի անփորձները (ինչքան էլ կուզէ ազնիւ լինէին) միշտ և անպատճառ կը խաբւին կեանքումը ոչ թէ «խաթարալայի» խաբեբայութենի իդէալն շնորհով, այլ և ամեն փոքր ի շատէ փորձված մարդուց: Ի հարկէ մեզ համար միթարական բան չէ ուսանողների էդ պիտի վեճակը և շատ ցանկալի է, որ Պ. Պիսարեվի ասած համարարանիցը դուրսը զարգացողներից լինին մեր հայ ուսանողները:

Մեր կարծիքով աւելի բնական բան կլինէր Պ. Սունդուկեանցի կողմից, ոչ թէ յաղթող դուրս բերել իր անփորձ ուսումն առած երիտասարդին, այլ դառնապէս յաղթված: Եւ էդ անմիթարական պակասութիւնը նկարագրելով, կարող էր մեր ապագայ ուսանողների համար լաւ դաս լինիլ պիտեւր: Մեր ժողովուրդը առ հասարակ, նոր ձու զնոզ, է կոչում ուսումն առածներին և ամեն տեսակ ծաղրածութիւն է անում նրանց վրայ — մեր կարծիքով դրամատիկական հեղինակն էլ պէտք է սաստկացնէր էդ ծաղրածութենի թոյնը, որ ներգործէ դրանց վրայ և ստիպէ դրանց աւելի կեանքի համար պատրաստվելու, քան թէ երեւակայական աշխարհի համար:

ՁԱՆԱԶԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Պետերբուրգի սենատումը քրննելու համար նշանակված Կովկասեցիներին վերաբերեալ գործերը: Էս տարի նոյեմբերի 10-ին Պետերբուրգի սենատի մեծեկայ ղեկարարամենտումը միւս գործերի հետ նշանակված էին և էս հետեւել Կովկասեցիներին գործերը

- 1.) քաղաքացի Յարութիւն ՊԵՏՐՈՍԵԱՆՅԻ գործը ԹԱՐԻԱՆԵԱՆՅԻ կտակադրի մասին, 2.) նազդարնի սովետնիկ ՄԵԼԻՔԵԱՆՅԻ, տիտուլեարնի սովետնիկ ՄԻՐԻՄԱՆԵԱՆՅԻ և միւսների գործը նրանցից բողոքի (апелляция) տուղանքի (շարաֆ) չպահանջելու մասին, 3.) Ախալցխայի բնակչի կին Ելենա ՐԱՊԱԻՂՈՎԻ անշարիանա ՊՈՂՈՆԱՆՅԵՐԻ հետ ունեցած գործը ամս

մասին, 4.) Թիֆլիսի բնակչի կին ԱՎԵՏԻՍԵԱՆՅԻ՝ ԲԵՐԻՆԵԱՆՅԻ հետ ունեցած գործը մտերմակի (վեկսիլի) մասին, և 5.) քաղաքացի Մովսէս ՏԵՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆՅԻ գործը դատաստանին չենթարկվելու մասին:

Երկրագնտիս վրայ էլած ոսկու և արծաթի որքանութիւնը: Հաշիւ են արել, որ երկրագնտիս վրայ հիմի 31 1/2 միլիարդ (հազար միլիոն) ոսկէ և արծաթէ փող կայ, որոնցից 22 միլիարդը արծաթէ փողն է, իսկ 9 1/2 միլիարդ ոսկէն:

Պահնցեսա Դագմարայի բաժնիքը և Ռուսաստանումը ստացած փողերը: Էս տարի հոկտեմբերի 5-ին հաստատուեցաւ պրինցեսա Դագմարայի և Նորին Բարձրութիւն Ժառանգի պրեսակի պայմանագիրը: Էդ պայմանագրի դրութենով պրինցեսա Դագմարան, այժմ Մեծ Իշխանուհի Մարիա Ֆեոդորովնան ստանում է Նորին Բարձրութիւն Ժառանգից ընծայ 50,000 մ. և Նորին Մեծութիւն թագաւոր կայսրից 100,000 մ. էդ 150,000 մ. դրամադուրը պէտք է պահվի ուստաց հասարակական բանկերումը և դրա շահը պէտք է ստանայ Մեծ Իշխանուհի Ժառանգուհին: Բացի էդ փողերը Մեծ Իշխանուհին պէտք է ստանայ տարէնը 50,000 մ. քորոցի փող ամուսնով:

Մեծ Իշխանուհու պալատի պահելը կայսերական գանձարանի վրայ է:

Եթէ Մեծ Իշխանուհին որբէրիանայ էն ժամանակը կտանայ նա տարէնը 85,000 մ. և նրա պալատը կպահվի նմանապէս գանձարանի ծախսով: Էդ դումարի կէսը միայն կտվի Մեծ Իշխանուհուն, եթէ նա Ռուսաստանից դուրս գնայ: Մեծ Իշխանուհու որբէրիութենի համար նշանակված փողը էլ չի տվի նրան, եթէ նա վրայ երկու մարդ ուզէ: Բայց էդ ղեկուածումն էլ նրանը կհամարվի վերոյիշեալ Ժառանգի տված 50,000 մանկթը և կայսեր հտորճած 100,000 մանկթի շահը:

Մեծ Իշխանուհին կարող է կարգադրութիւն անել վերոյիշեալ 50,000 մանկթի համար, եթէ առաջին ամուսնութենից իրան որդի չինայ:

Դանեայի թագաւորի ներկայացնողը եր թագաւորից սրբաւորվեցաւ 60,000 լիկագալեր փող նշանակիլ պրինցեսա Դագմարայի բաժնի համար:

Ռուսաստանի բաղարական աստիճան բարձրներին օգնութիւն

տալու համար սարգված կոմիտեայի հաշիւը: Էդ կոմիտեայը հրատարակեց 1865 թւի իր գործունէութենի հաշիւը: Դրանից երևում է որ մինչև 1865 թ. կոմիտեայը ունեցել է դրամադուրի 3,047,376 մ. 27 կ. 1865 թւին էլ սուս է եկել թէ էդ փողի շահը և թէ միւս արդիւնքներից 186,498 մ. 15 կ. 1865 թւին մտնել է կոմիտեայը 139,962 մ. 57 կ. Մնում է 1866 թւի համար ընդ ամենը 3,093,911 մ. 85 կ. 1865 թւին (թոշակ) պենսիա ստացող էլաւ 1,581 մարդ, որոնց տվել է մէկ տարումը 126,643 մ. 74 կ.

ԱՌՆԵՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Լիվերպուլ, դեկտեմբերի 14.

Էսօր ծախվեցաւ 10,000 հակ բամբակ: Միջին տեսակ Ամերկեայի բամբակի դինը 14 պէնս:

Պետերբուրգ դեկտեմբերի 15.

Կուրսը Լոնդոնի վրայ . 31 1/4 պէնս:
 Պարիսի վրայ . . . 33 1/2 սանտիմ:
 5% Լատարեյով առաջին փոխառութենի տոմսակները 109 1/2 մանկթ:
 — Երկրորդինը 104 1/2 մանկթ:
 Ռսկին 6 մ 18 կ.

Թիֆլիս, դեկտեմբերի 3.

Շաքարը Յրանսիացոց 10 մ:
 — Ռսինը . . . 10 մ 40 կ.
 Արծաթը 84% . . . 220 մ. —
 — 72% . . . 55 մ. —
 Ռսկին 6 մ 45 կ.

ՄԱՍՆԱԻՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ:

Դուրս եկաւ Պ. Հ. Էնֆիանճեանցի և ընկ. տպարանից առանձին տեսքով «Վաճառակաւնից» դուրս տպված «ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՌՈՒԹԵՆԻ ՆՈՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ» և ծախվում է Պ. Ա. Էնֆիանճեանցի գրքատանը հատը 20 կոպեկով: Տասը օրինակից աւելի աւանդներին կպակասացնվի 20%: